EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը 2013թ. ընթացքում իրականացնում է «Մեր մեծերը» ծրագիրը:

2013թ. ծրագիրը նվիրված է Արշակ Չոպանյանին, Գևորգ Չորեքչյանին, Վիլյամ Սարոյանին, Նիկոլ Աղբալյանին, ինչպես նաև Հայաստանի շախմատի հավաքականին:

Նախարարությունը խնդրում է տարվա ընթացքում կազմակերպել վերոնշյալ մեծերին նվիրված միջոցառումներ, տրամադրել դրանց վերաբերյալ հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր, որոնք կտեղադրվեն նախարարության կայքէջում և «Հայերն այսօր» պարբերականում:

Կից՝ սփյուռքի նախարարության հայտարարությունը:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
<ՄԵՐ ՄԵԾԵՐԸ> ԾՐԱԳԻՐԸ

Հարգելի՝ բարեկամ,

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության շրջանակում իրականացնում է <Մեր մեծերը> ծրագիրը, որը նվիրված է մեր փառապսակ մեծերին: Այն առաջին անգամ մեկնարկել է 2009 թվականին և կրում է շարունակական բնույթ:

Սույն ծրագրի սահմաններում նախարարությունը 2009 թվականին կազմակերպել է հայ ժողովրդի մեծանուն զավակներ, ՀՀ ազգային հերոսներ Վազգեն Վեհափառի, Շառլ Ազնավուրի, Ալեք Մանուկյանի, Քըրք Քըրքորյանի, 2010 թվականին՝ Լազարյան եղբայրների, Պողոս Նուբարի, Լևոն Շանթի, Մխիթար Սեբաստացու, Վարդգես Սուրենյանցի, Միսաք Մանուշյանի, 2011 թվականին՝ Գարեգին Նժդեհի, Մոնթե Մելքոնյանի, Պետրոս Դուրյանի, Ջիվանու, 2012 թվականին Սայաթ-Նովայի (300-ամյակ), Հովսեփ Օրբելու (125-ամյակ), Հովհաննես Բաղրամյանի (115-ամյակ), Գառնիկ Զուլումյանի՝ Գառզուի (105-ամյակ) և Գարեգին Հովսեփյանի (145-ամյակ) կյանքին և հայրենանվեր գործունեությանը նվիրված միջոցառումների շարք:

2013 թվականին «Մեր մեծերը» ծրագրում ընգրկվել են Արշակ Չոպանյանի, Գևորգ Զ Չորեքչյանի, Վիլյամ Սարոյանի, Նիկոլ Աղբալյանի անունները, ինչպես նաև Հայաստանի շախմատի հավաքականի անունները:

<Մեր մեծերը> ծրագրի նպատակներն են՝

• հայրենանվեր անհատների ճանաչողությամբ՝ սերնդի մեջ ազգային իրական արժեքների՝ հայրենասիրության, աշխատասիրության արմատավորում և հայրենասեր մարդու նկատմամբ հարգանքի ձևավորում,

• հայապահպանության հիմնախնդիրների լուծմանը նպաստում,

• երիտասարդության լայն շրջանում ազգային արմատների և ինքնության ճանաչմանը նպաստում,

• պետականակերտման հոգեբանության արմատավորում, ազգային ինքնության ամրապնդում և հայազորացում, մատաղ սերնդի հայեցի դաստիարակություն:

Խնդրում ենք Ձեզ տարվա ընթացքում կազմակերպել վերոնշյալ մեծերին նվիրված միջոցառումներ և արդյունքների մասին տեղեկացնել մեզ (հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր):

Ներկայացված նյութերը կտեղադրվեն նախարարության կայքէջում և <<Հայերն այսօր>> պարբերականում (www.mindiaspora.am, hayernaysor.am):

Արշակ Չոպանյան

Չոպանյան Արշակ Հովհաննեսի (15.7.1872, Կ. Պոլիս – 08.06.1954, Փարիզ), գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ: Ծնվել է ակնցի ոսկերչի ընտանիքում: Սովորել է Կ. Պոլսի Մաքրուհյան դպրոցում, ապա՝ Կեդրոնական վարժարանում՝ աշակերտելով ժամանակի մի շարք ականավոր գրական գործիչների: Ստեղծագործել է վաղ տարիներից՝ ինքնուրույն և թարգմանական գործերով աշխատակցելով «Բուրաստան մանկանց», «Արևելք», «Մասիս», «Հայրենիք» պարբերականներին: 1895-ին խմբագրել է «Ծաղիկ» կիսամսյա թերթը: Նույն տարում, խուսափելով թուրք իշխանությունների հետապնդումներից, տեղափոխվել է Փարիզ, որտեղ հրատարակել է «Անահիտ» (1898–1911, նոր շրջան՝ 1929–49) գրական-գեղարվեստական հանդեսը, մասնակցել «Վերածնունդ» (1917–19), «Ապագա» (1921–24) թերթերի խմբագրմանը:

Չոպանյանը եղել է ռամկավար կուսակցության անդամ: Ստեղծագործել է գրական բոլոր սեռերով: Նրա բանաստեղծություններն ամփոփված են «Արշալույսի ձայներ» (1891), «Թրթռումներ» (1892), «Քերթվածներ» (1908) գրքերում, որոնք բնորոշվում են ռոմանտիկական պոեզիայի միակողմանիությունը հաղթահարելու եւ իրականության կենդանի գծերն արտահայտելու ձգտումով: Լույս են տեսել Չոպանյանի նաև «Թուղթի փառք» (1892) հոգեբանական վիպակը, «Տղու հոգիներ» (1923) պատմվածքների և պատկերների ժողովածուն, «Մութ խավեր» (1893), «Հրաշքը» (1923) դրամաները և այլ երկեր:

Հայ գրականության մեջ առանձնակի նշանակություն ունի Չոպանյանի քննադատական և գիտական-բանասիրական գործունեությունը: Լինելով կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքների հետնորդ՝ նա նորովի է մեկնաբանել հայ գրականության շատ երևույթներ: Չոպանյանը հրատարակել է միջնադարյան և նոր շրջանի գրական հուշարձաններ՝ Նահապետ Քուչակին վերագրվող քառյակների և ընդհանրապես միջնադարյան հայրենների ժողովածուները («Նահապետ Քուչակի

դիվանը», 1902, «Հայրեններու բուրաստանը», 1940), «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» (1910), «Հայ էջեր» (1912) գրքերը: Կազմել և լույս է ընծայել Պ. Դուրյանի (1894) և Մ. Պեշիկթաշլյանի (1907) երկերը, որոնց նվիրել է նաև ծավալուն ուսումնասիրություններ:

Չոպանյանը առաջինն է Գրիգոր Նարեկացու ժառանգությունը վերլուծել իբրև գեղարվեստական ստեղծագործություն, կրոնամիստիկական շղարշի տակ տեսել արտահայտված կենսական գծերն ու մարդասիրական էությունը, Նարեկացուն դրել համաշխարհային գրականության հսկաների կողքին:

Չոպանյան-քննադատի նախասիրած ձևը էսսե-դիմանկարի ժանրն է, որի սեղմ շրջանակներում նա տվել է գրողի ընդհանրացված, խոր և դիպուկ բնութագիրը, բացահայտել նրա ստեղծագործական մտածողության, մեթոդի և ոճի էական գծերը: Այդպիսի հոդվածներ է նվիրել Խ. Աբովյանին, Ղ. Ալիշանին, Հ. Պարոնյանին, Գ. Սունդուկյանին, Ռաֆֆուն, Պ. Պռոշյանին, Ա. Շիրվանզադեին, Համաստեղին և ուրիշների (զգալի մասն ամփոփված է «Դեմքեր», հ. 1-2, 1924-29, ժողովածուներ):

Չոպանյանի գեղագիտական հայացքների հիմքը ռեալիստական արվեստի սկզբունքներն են, որոնց մեջ նա տեսել է կյանքին արձագանքելու և ժողովրդին ծառայելու լավագույն ուղին, թեև բարձր է գնահատել նաև ռոմանտիկական ուղղության պատմական նշանակությունը: Չոպանյանը արձագանքել է գրական նոր երևույթներին, հաճախ առաջինն է տվել դրանց հեղինակների (Վ. Թեքեյան, Սիամանթո, Դ.Վարուժան, Մ.Զարիֆյան և ուրիշներ) ստեղծագործական ինքնության բնութագիրը:

1924-ին Ե. Չարենցին անվանել է «Հայ մեծագույն բանաստեղծներեն մին» և «Հայ հանճարի նոր հաստատումը» («Ապագա», 1924, N 16, 17):

Չոպանյանը հոդվածներ է նվիրել նաև արևմտա-եվրոպական (Վ. Հյուգո, Բալզակ, Է. Զոլա, Հ. Իբսեն, Է. Վերհառն) եւ ռուս (Ա. Պուշկին, Ն. Գոգոլ, Ի. Տուրգենև, Լ. Տոլստոյ) գրողներին: Ռուս գրականության մեջ բարձր է գնահատել «Վեհանձն գթության ոգին, մարդկային լայն եղբայրության մը բուռն ծարավը, բացարձակ արդարության

բաղձանքը, կյանքի ուղղակի դիտողության և պարզ ու հավատարիմ արտահայտության ձգտումը, արվեստը առանց արվեստականության...» («Անահիտ», 1909, N 1-2, էջ 47):

Չոպանյանը մեծ աշխատանք է կատարել հայ գրականությունը Եվրոպայում պրոպագանդելու և հայ ժողովրդի դատը պաշտպանելու ուղղությամբ: Անձնական և նամակագրական կապեր է ունեցել ժամանակի եվրոպացի գրողների ու հասարակական գործիչների հետ: Թարգմանել է և ֆրանսերենով հրատարակել հին ու նոր շրջանի հայ բանաստեղծների բազմաթիվ երկեր: Այդ աշխատանքի պսակն է եղել «Վարդենիք Հայաստանի» ֆրանսերեն (հ. 1-3, 1918-1929) ժողովածուն:

1933-ին այցելել է հայրենիք, ողջունել նրանում կատարվող մեծ փոփոխությունները:

Չոպանյանի գրական-հասարակական գործունեությունը բարձր են գնահատել Հ. Թումանյանը, Ա. Շիրվանզադեն, Ա. Իսահակյանը, Ա. Ֆրանսը, Է. Վերհառնը, Ռ. Ռոլանը, Վ. Բրյուսովը և ուրիշներ:

Գևորգ Զ Չորեքչյան

(1868 դեկտեմբերի 2-սեպտեմբերի 26, 1954), Ամենայն Հայոց 129-րդ Կաթողիկոս, ծնվել է Նոր Նախիջևան քաղաքում: Ամենայն հայոց կաթողիկոս 1945-ից: Հաջորդել է Խորեն Ա Մուրադբեկյանին:

Սովորել է նախ տեղի ծխական դպրոցում, այնուհետև հոգևոր սեմինարիայում: 1879 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Մակար Ա կաթողիկոսի տնօրինությամբ Գևորգ սարկավագը 1889 թ. մեկնում է Գերմանիա: 1889-1894 թթ. ուսանում է Լայպցիգի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում և նույն քաղաքի կոնսերվատորիայում: Վերադառնալով հայրենիք՝ մեկ տարի Գևորգյան հոգևոր ճեմարանում դասավանդում է երաժշտություն, ապա մեկնում է Նոր Նախիջևան՝ ծավալելով այստեղ բուռն մանկավարժական, հայրենասիրական ու երաժշտական գործունեություն: 1913 թ. Գևորգ Ե կաթողիկոսը նրան հրավիրում է Մայր Աթոռ, ձեռնադրում է աբեղա և նորից Նոր Նախիջևան ուղարկում՝ այս անգամ արդեն առաջնորդական տեղապահի պաշտոնով:

1916 թ. Գևորգ վարդապետ Չորեքչյանը վերադառնում է Մայր Աթոռ: Նույն թվականին նա արժանանում է ծայրագույն վարդապետության աստիճանի, ապա նշանակվում Սինոդի անդամ: 1917 թ. օծվում է արքեպիսկոպոս՝ դառնալով վանական կառավարության նախագահ և Մայր Տաճարի լուսարարապետ: Միաժամանակ ստանձնում է նաև արևմտահայ գաղթականության ողջ կարիքների ու հոգսերի լուծման հարցերը, որպես Եղբայրական օգնության կոմիտեի նախագահ: 1925 թ. նրան շնորհվում է արքություն: 1922-1927 թթ. Գևորգ արք. Չորեքչյանը նշանակվում է Վիրահայոց թեմի հոգևոր առաջնորդ: Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, համաձայն նահատակ Խորեն Ա կաթողիկոսի թիվ 620 կոնդակի, 1938 թ. ապրիլի 10-ից ստանձնում է Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահի պաշտոնը: 1941 թ. ապրիլին ընտրվում է ազգընտիր տեղակալ Հայոց Հայրապետության: Նա տեսնելով պետական անհանդուրժող, ապազգային չինովնիկների վարած քաղաքականությունը Մայր Աթոռի և եկեղեցու նկատմամբ՝ սկզբունքորեն վերակառուցում է Մայր Աթոռի

աշխատանքները: Մայր Աթոռի միաբանության անդամները, քիչ բացառությամբ պիտակավորվելով որպես դաշնակցական, հակահեղափոխական, ժողովրդի թշնամի, վաղուց արդեն աքսորվել էին, նրանցից ոչ ոք չվերադարձավ: Այսպիսի օրհասական վիճակում էր Մայր Աթոռը, երբ 1939 թ. սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Գևորգ Չորեքչյանը կարճ ժամանակից հետո հայրենիքի, սփյուռքի և Մայր Աթոռի տրամադրած նյութական միջոցներով պատրաստել է տալիս «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուները, որոնք իրենց նպաստը բերեցին բաղձալի հաղթանակին: 1945 թ. ապրիլի 19-ին ազգընտիր տեղակալը առանձնազրույց է ունեցել ԽՍՀՄ առաջնորդ Ի.Ստալինի հետ, որի ընթացքում բարձրացել է հայ ժողովրդին հուզող բազում հարցեր: Այդ հանդիպման արդյունքում Մայր Աթոռի նկատմամբ անտարբեր և թշնամական վերաբերմունքը որոշ չափով փոխվում է: Տեղակալ սրբազանը այդ ընթացքում կարողանում է կանգնեցնել եկեղեցիների բարբարոսական քանդումը:

1945 թ. հունիսի 16-22-ը Մայր Աթոռում հրավիրված Ազգային-եկեղեցական ժողովը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մասնակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին (1945-1954): Ինը տարվա գահակալության ընթացքում նա հասցնում է վերակազմակերպել Մայր Աթոռի ներքին և արտաքին թեմերը: Միանգամից ձեռնադրում է տասը եպիսկոպոսներ, հետագայում (1951)՝ ևս հինգը, որոնց հաստատում է թեմերի առաջնորդների թափուր պաշտոններում:

Նա 1944 թ. կարողանում է Մայր Աթոռի նախկին «Արարատ» ամսագրի փոխարեն հրատարակել «Էջմիածինը»՝ որպես Մայր Աթոռի պաշտոնաթերթ: Վեհափառի ջան-քերով վերաբացվել է Մայր Աթոռի տպարանը, վերադարձվել գրադարանը, վանքապատկան շենքերի մի մասը, մասնավորապես՝ Ս.Հռիփսիմե, Ս. Գեղարդավանք, Խոր Վիրապի վանքերը և այլն: 1945 թ. նոյեմբերի 1-ին Կաթողիկոսի ջանքերով վերաբացում է հոգևոր ճեմարանը: Մահացել է 1954 թվականի սեպտեմբերի 26-ին:

Գևորգ Զ Չորեքչյանը կարևոր խնդիր է համարել մայր հայրենիքի և սփյուռքահայության կապերի ամրապնդումը, սփյուռքի եկեղեցական և ազգային միասնության ապահովումը: Մեծ ավանդ է ունեցել 1946–48-ի հայրենադարձության կազմակերպման գործում: 1945-ի ապրիլին Մոսկվայում Ի. Ստալինի հետ հանդիպման ժամանակ բարձրացրել է Արևմտյան Հայաստանի հողերի խնդիրը, իսկ 1945-ի հոկտեմբերի 25-ին կոնդակով դիմել է ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկական հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով: 1947-ի ապրիլի 20-ին հրապարակել է ընդարձակ մի կոնդակ՝ «Հայկական հարցի լուծման մասին»: Ողջունել է 1947-ի ապրիլին Նյու Յորքում գումարված Հայկական համաշխարհային կոնգրեսը, որի նպատակն էր վերստին արծարծել Թուրքիայի բռնագրաված հայկական տարածքների վերադարձման հարցը:

Վիլյամ Սարոյան

Վիլյամ Սարոյանը 20-րդ դարի ամերիկյան գրականության ականավոր ներկայացուցիչներից է: Նրա ստեղծագործությունները թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Սարոյանը ծնվել է 1908 թ. Կալիֆոռնիայում՝ Բիթլիսից (Արևմտյան Հայաստան) գաղթած աշխատավոր հայ ընտանիքում: Հետագայում, արդեն մեծ գրող, նա գրելու էր. «Ես Վիլյամ Սարոյանն եմ՝ Արմենակ և Թագուհի Սարոյանների չորրորդ զավակը... Ես ծնվել եմ Ֆրեզնոյում՝ Կալիֆոռնիայի նահանգ, բայց ծնողներս բիթլիսցի են... Հոգ չէ, թե մենք հայ հողից հեռու էինք ապրում, Հայաստանը մեր մեջ էր, Բիթլիսը մեր մեջ էր: Մենք էլ Բիթլիսի մեջ էինք՝ մեր խոհերով, նիստուկացով, հիշատակներով: Երգում էինք մեր հին երգերը: Պատմում Բիթլիսի պատմությունները...»:

Դեռ չէր բոլորել նրա երեք տարին, երբ վախճանվեց հայրը: Սարոյանը կյանքի դառնությունը ճաշակել է մանկությունից: Նա դպրոցում քիչ է սովորել՝ շուրջ վեց տարի: Վաղ հասակից էլ սկսել է աշխատել, եղել է լրագրավաճառ, հեռագրատան ցրիչ, սևագործ բանվոր, գրասենյակային ծառայող ու վարձու զինվոր...

1934 թ. լույս է տեսնում Սարոյանի «Խիզախ պատանին թռչող մարզաձողերի վրա» վիպակը և միանգամից ճանաչում է բերում երիտասարդ հեղինակին: Սարոյանը գրել է 1500-ից ավելի պատմվածքներ, բազմաթիվ վեպեր, վիպակներ, պիեսներ:

Նրա ստեղծագործությունների հերոսները հասարակ մարդիկ են, աշխատավորներ ու թափառաշրջիկներ, բատրակներ ու բանվորներ, մանր առևտրականներ ու ծառայողներ, որոնց կյանքը լի է դառնությամբ, կարիքով ու զրկանքով: Նրանք, սակայն, չեն հուսալքվում ու ընկրկում կյանքի դժվարությունների առաջ, այլ ամենածանր դրության մեջ էլ փայփայում են լավի հույսը, ամենամռայլ վիճակում՝ գտնում լույսի շողերը: Սարոյանի ստեղծագործությունները տոգորված են խոր մարդասիրությամբ ու պայծառ լավատեսությամբ, հասարակ մարդու ճակատագրի, նրա ապագայի հանդեպ մտահոգությամբ:

Սարոյանի շատ գործերում ոչ միայն հայի կերպարներ կան, այլև կա հայկական հոգեբանություն, ոգի ու ոճ, կա անհուն կարոտ հայրենի ավերված օջախի ու կորցրած ծննդավայրի հանդեպ: «Թեև անգլերեն եմ գրում,- գրել է Սարոյանը,- բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Գործածածս խոսքերն անգլերեն են, միջավայրը, որի մասին գրում եմ, ամերիկյան է: Սակայն այն ոգին, որ ստիպում է ինձ գրել՝ հայկական է: Ուրեմն՝ ես հայ գրող եմ»:

Սարոյանի շատ գործեր թարգմանված են հայերեն: Սարոյանը շատ էր սիրում Հայաստանը, Երևանը: Նա մի քանի անգամ այցելել է իր նախնիների հայրենիքը, որը նաև իրենն էր համարում: Առաջին անգամ 1935-ին է եղել Երևանում: 25 տարի անց՝ 1960-ին նա կրկին այցելել է և ուրախացած բացականչել. «...Ինձ թվում էր, թե ընկել եմ մի ուրիշ աշխարհ: Զարգացումը մեծ է, հաջողություններն՝ անհամար»:

Վիլյամ Սարոյանը վախճանվեց ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում 1981 թվականի մայիսի 18-ին: Նրա կտակի համաձայն աճյունի մի մասը բերվել է Հայաստան և թաղվել Երևանում՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Նիկոլ Աղբալյան

Նիկոլ Աղբալյանը ծնվել է 1875-ին Թիֆլիսի նշանավոր Հավլաբար թաղամասում: Ուսանել է Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի և Լոզանի համալսարաններում: Կարճ ժամանակով հետևել է Սորբոնի համալսարանի դասախոսություններին: Զբաղվելով ուսուցչությամբ՝ շրջագայել է Հայաստանի մի շարք գյուղերում, ինչպես նաև՝ սփյուռքի հայաշատ կենտրոններում: Վերադառնալով Թիֆլիս՝ ակտիվ մասնակցություն է բերել գրական-հասարակական կյանքին, միաժամանակ աշխատակցելով իր ժամանակի թերթերին ու պարբերականներին: 1905-ին մաս է կազմել Հովհաննես Թումանյանի «Վերնատանը»՝ մոտիկից շփվելով հայ գրականության մեծերի հետ: Եղել է արտասահմանի մի շարք քաղաքներում՝ Լոզան, Փարիզ, Ալեքսանդրիա, Կահիրե, Ս. Պետերբուրգ, Թեհրան, Բեյրութ:

Իր իսկ տեղեկությունների համաձայն՝ ինչպես վկայում է «Հուշապատում ՀՅ Դաշնակցության» հատորը, Աղբալյանը վարել է Թեհրանի Համայնական Խորհրդի նախագահի պաշտոնը, ապա եղել է Ազգային Բյուրոյի անդամ, Թիֆլիսում Հայ Գրողների Ընկերության փոխնախագահ, Հայաստանի Պառլամենտի անդամ, Հայաստանի Հանրապետության լուսավորության և կրթության նախարար, Կարսի Մայիսյան ապստամբությունը վերաքննող հանձնախմբի նախագահ, Շարուրի ցանքերի բաշխման և օգտագործման վարիչ: 1904-ից սկսած՝ ՀՅ Դաշնակցության գործուն անդամ է եղել: Մասնակցել է կուսակցության ընդհանուր և շրջանային ժողովներին: Նկատի ունենալով սփյուռքի աշխարհատարած հայության ազգային դիմագծի, ինչպես նաև հայ մշակույթի պահպանման կարևորությունը՝ 1928-ին Լ. Շանթի, Հ. Օհանջանյանի և Գ. Իփեկյանի հետ միասին Կահիրեում հիմնել է «Համազգային»-ը, իսկ հետագայում Լ. Շանթի հետ միասին հիմնում են Բեյրութի «Նշան Փալանճյան» ճեմարանը, ուր պաշտոնավարելու տասնյոթ տարիների ընթացքում նա հրատարակել է «Բանասերի Հուշատետրը», գրական, քննադատական ուսումնասիրություններ, «Սայաթ-Նովայի հետ» վերլուծական աշխատությունը, հանդես է եկել հայոց լեզվի և

մատենագրության, հայ գրականության պատմության վերաբերյալ բանախոսություններով, որոնք հետագայում ամփոփվել են չորս հատորների մեջ:

Հետաքրքիր է կարդալ չորրորդ հատորում ամփոփված հատկապես «Հայոց ազգն ու աշխարհը», «Հայոց լեզուն», «Հայ ազգը և իր բնավայրը» խորագիրը կրող և մյուս ուսումնասիրությունները՝ համոզվելու համար, թե որքան խորն է Աղբալյանի իմացությունը իր ժողովրդի պատմության, նրա շքեղ անցյալի, մանավանդ նրա խիզախ ոգու և ազգային ինքնագիտակցության մասին: «Հայ ազգը և իր բնավայրը» գրության մեջ կարդում ենք հետևյալ տողերը. «Այս է դարու մտաւորականութիւնը եւ ժողովուրդը թէեւ դրական արդիւնքներով չեն յիշատակած, թէ իրենք՝ իրենց անցեալի մասին գաղափար ունին, բայց իրենց գործերը ցոյց կու տան, որ իրենք ունին իրենց անցեալի մեծութեան գիտակցութիւնը, ինչ որ իրենց գիտական յատկութիւններէն մէկն է»: Իր շահեկանության համար կատարենք հետևյալ մեջբերումը. «Վէս, հպարտ, յաղթական եւ հին քաղաքակրթութիւն ունեցող, անկախութեան զօրաւոր ոգիի տէր ժողովուրդի մը զգացումը կայ գրականութեան մէջ: Մեր մտաւորական դասը ունի մեծ ազգի մը զաւակը եղած ըլլալու գիտակցութիւնը»: Սույն տողերը կարծեք գրված են հենց իր համար: Աղբալյանն այն քչերից էր, ով իր մեջ խտացնում էր այդ գծերը և հպարտ էր իր ծագումով, ում խոսքն ու գործը ընթացել են միասին:

Իր ժողովրդի և հայրենիքի ապագան որպես գործունեության ելակետ ընդունելով՝ Աղբալյանն ապրել ու գործել է իր դավանած սկզբունքների համաձայն, որոնք շարադրված են «Մտածումներ ՀՅ Դաշնակցութեան մասին» եւ «Մեր կանոնագիրը» խորագիրը կրող գործերում, որոնք առանձին գրքույկով լույս են ընծայվել Լոս Անջելեսում 1987-ին ՀՅԴ «Գ. Նժդեհ» Կոմիտեի նախաձեռնությամբ: Մեծ հայի սկզբունքայնության, խոսքը գործի վերածելու իր հանձնառության մասին են վկայում գրքում տեղ գտած իր հետևյալ տողերը. «Ամէն ջանք թափելու գաղափարի մէջ շատ աւելի ծանրակշիռ պարտականութիւններ են մտնում քան կուսակցական տուրքի հատուցումը, անտեսումն ընտանեկան եւ անձնական բարօրութեան, արհամարհանք դիրքի եւ ազդեցութեան, ժխտում ամէն բարեկեցութեան

եւ ապահով կենցաղի, վերջապէս գերագոյնը՝ մահ, բոլորը մտնում են «ամէն ջանքի» մէջ»: Սրանք միայն խոսքեր չեն. նրա կյանքը՝ աստանդական, իսկապես անձնական բարօրությունից և ապահով կենցաղից զուրկ տարիներ են եղել:

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքական

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը օլիմպիական եռակի չեմպիոն է (2006, 2008, 2012), աշխարհի թիմային առաջնության (2011) և Եվրոպայի թիմային առաջնության (1999) հաղթող: Բացի դրանից, հավաքականը երեքական անգամ դարձել է օլիմպիադաների և աշխարհի թիմային առաջնությունների բրոնզե մեդալակիր, մեկական անգամ էլ Եվրոպայի թիմային առաջնությունների արծաթե և բրոնզե մեդալակիր:

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը ձևավորվել է Հայաստանի Հանրապետության անկախացումից անմիջապես հետո՝ 1992-ին: Եվ հենց առաջին մրցաշարում թիմը համաշխարհային օլիմպիադայում (1992, Մանիլա, Ֆիլիպիններ) գրավեց մրցանակային երրորդ տեղը: Առաջին թիմի առաջին խաղատախտակի վրա խաղում էր մինչ այդ ԽՍՀՄ հավաքականի կազմում օլիմպիական կրկնակի չեմպիոն դարձած (1984, 1986) Ռաֆայել Վահանյանը:

Հետագա տարիներին հավաքականը մասնակցել է համաշխարհային բոլոր օլիմպիադաներին:

Համաշխարհային օլիմպիադաներում հաղթելու համար հավաքականի անդամներն արժանացել են պետական պարգևների: 2006-ին Թուրինի 37-րդ օլիմպիադայում հաղթելու համար նրանք պարգևատրվեցին Մովսես Խորենացի մեդալով, 2008-ին Դրեզդենում կայացած 38-րդ օլիմպիադայում տարած հաղթանակի համար՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով: 2012-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կայացած 40-րդ օլիմպիադայում տարած հաղթանակի համար թիմի առաջատար Լևոն Արոնյանը և մարզիչ Արշակ Պետրոսյանը պարգևատրվեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով, իսկ թիմի մյուս անդամները՝ Պատվո շքանշանով:

Առաջին տարիներին հավաքականի կազմը ձևավորվում էր ըստ ՖԻԴԵ-ի վարկանիշների: Վերջին տարիներին սկզբունքը փոխվել է. չորս կամ հինգ

խաղացողները, կախված առաջիկա մրցաշարում հայտավորվող խաղացողների թվից, ընտրվում են ըստ վարկանիշի, ևս մեկ տեղ հավաքականում ստանում է Հայաստանի ընթացիկ տարվա առաջնության հաղթողը:

1992-1994-ին, 1998-ին և 2000-ին առաջին խաղատախտակի վրա հանդես է եկել Ռաֆայել Վահանյանը: 1996-1997-ին և 2001-ից մինչև 2005-ի օգոստոս հավաքականը գլխավորել է Վլադիմիր Հակոբյանը:

2005-ի նոյեմբերից մինչ օրս թիմը գլխավորում է Լևոն Արոնյանը:

1996-ից հավաքականի մարզիչն է Արշակ Պետրոսյանը:

Համաշխարհային օլիմպիադաներին Հայաստանի հավաքականն սկսել է մասնակցել հիմնադրման թվականից՝ 1992-ից: Եվ հենց առաջին օլիմպիադայում հասավ մեծ հաջողության՝ նվաճելով բրոնզե մեդալներ: Հետագայում թիմը ևս երկու անգամ զբաղեցրեց երրորդ հորիզոնականը, իսկ 2006-2012 թվականներին կայացած չորս օլիմպիադաներից երեքում դարձավ օլիմպիական չեմպիոն: Այդ նվաճումների շնորհիվ Հայաստանի ընտրանին օլիմպիադաների պատմության ընթացքում զբաղեցնում է հինգերորդ տեղը՝ իրենից առաջ թողնելով միայն արդեն գոյություն չունեցող ԽՍՀՄ հավաքականին, նրա իրավահաջորդ Ռուսաստանին, ԱՄՆ-ին և Հունգարիային: Վերջինիս Հայաստանը զիջում է միայն արծաթե մեդալների քանակով: